

## Շ Ի Ր Ա Կ Ի

### ԱԶԿԱՏԱՐԵԱՆ (ԿԻԿԼՈՊԵԱՆ) ԱՄՐՈՑՆԵՐ

#### Ա Ց Ր Պ Ե Ց Ի

Հայաստանի կիկլոպեան շէնքերի մասին ամբողջական նկարագրութիւնը որքան ցանկալի, այնքան էլ դժուարին և մեծամեծ ծախսերի հետ կապուած է, ուստի և՛ մենք առայժմ շատանում ենք նկարագրելու Շիրակի միայն մի տասնեակ այդպիսի ամբողջներ, որոնց յատկապէս այցելել ենք, ուսումնասիրելու նպատակով, դանց առնելով Կարսի, Խարաբա-Քիլիսայի, Գլի-Կայայի, Շօրաղի, Կէջևանի, Մորբերդի, Բասենի Զիվինի հին բերդի, Հասան-Ղալա (Վաղարշակերտ) աւանի, Արդրուժի միջնաբերդի, Արծթի գիւղի, Լուսաւորչի վանքի, Մշու դաշտի, Գըղիի Թէմբան դալայի, Դերջանի, Դերսիմի և Բալուի բարձունքների վրայ մեր ճանապարհորդութիւնների միջոցին անցողաբար նկատած նոյնպիսի շինութիւնները: Օգտուելով այն հանգամանքից, որ Մշու դաշտում հեքիաթների մէջ պատմուող կիկլոպներին աչկատար, այսինքն աչքը կատարի վրայ (թուրքերէն թափագեօզ) են կոչում, մենք էլ յարմար համարեցինք կիկլոպեան շէնքերը կոչել աչկատարեան:


1. Դեռ 1884 թ. ճանապարհորդեցի Շիրակի Ազրակ կամ Ազարակ գիւղը, որի մօտ Խճկոնքի վանքի ճանապարհին՝ Տիկորի ուղղութեամբ նկատելի է այն հսկայական ամրոցը, որը շրջապատուած է կրկնակի աչկատարեան շրջանի պարիսպներով. այս բերդը, որի մակերևոյթը երկու օրավարից աւելի է, շրջապատուած է այնպիսի խոշոր քարերով հիւսուած պարիսպով, որի իւրաքանչիւր կտորը կազմում է մօտաւորապէս մի խորանարդ մետր և աւելի: Այս պարիսպը, որ տեղ տեղ երեք-չորս իրար վրայ բարձուած քարերով է հիւսուած, ապշեցնում է այցելուին: Պարիսպի շուրջը դառիվայրները նոյնպէս ծածկուած են խոշոր որձաքարով, որոնք բոլորովին անմերձեանալի են դարձրել այդ ամրոցը իր ժամանակին:

2. Ազրազկից գրեթէ տասը կիլոմետր հեռավորութեամբ համանման մի ամրոց էլ կայ հռչակաւոր Տիկոր աւանում, որը ժողովրդից կոչուած է «Կամարականի բերդ»: Տիկորի տաճարից ոչ շատ հեռու մի բլուր շրջապատուած է աչկատար պարիսպներով, որի քարերը նոյն չափն ու ձևն ունին, ինչոր ասացինք Ազրազկի մասին: Տիկորի պարիսպների քարերը աւելի շատ են թափուած և ցրուած, քան թէ Ազրազկինը: Նկատելի է, որ Տեկորի այս պարիսպները խնամքով պահպանելիս են եղել Կամարականները միջին դարերում, Բագրատունիներից առաջ, քանի որ սրբատաշ քարերի գործածութեան շրջանում այդ ամրոցի քարերին ձեռք չեն տուել: Այս պարիսպների շուրջն էլ որձաքարի կոյտերով է պատած և անմերձենալի դարձրած:

3. Տեկորից անցայ Անի, որ հազիւ 20 վերստ հեռու է Կամարականների բերդից և կազմում էր դարձեալ Կամարականների նախկին կալուածքը: Քաղաքի դեղարուեստական ճարտարագիտութեան կողքին, այցելուի աչքը բնեռու է կաթողիկոսարանի մօտ ձորի բերանին կանգնած աչկատարեան պարսպի վրայ, որը երկու, տեղ տեղ երեք շարքից է կազմուած և ցրյց է տալիս հեթանոսական Անին, իր սկզբնական կազմով: Այս պարսպի կտորը, աւելի քան տասնեւհինգ մետր երկարութեամբ, ապացուցանում է որ հեթանոսական Անին էլ ամբողջապէս պարսպուած է եղել ներքուստ և արտաքուստ աչկատարեան որմերով, որոնք Բագրատունիների շրջանում քանդուել և գործադրուել են սրբատաշ պարիսպների կրաշաղաղ որմերի հիմքերի մէջ, որոնք տեղ տեղ նկատելի են:

Այնքան հսկայական են եղել Անիի աչկատարեան շրջանի որմերը, որ Բագրատունիների շինել տուած երկար ու ձիկ պարիսպների, մեծամեծ տաճարների և պալատների հիմքերում այնքան գործածելուց յետոյ, դեռ մինչև օրս տեղ տեղ երևում են կանգուն մնացորդներ: Աչկատար շրջանի մնացորդները ոչ միայն կանգնած են կաթողիկոսարանի (ապա մզկիթի) շարքին Ախուրեանի ձորի զազաթին, այլ նրանց հետքերը երևում են Կրզ-Կալայում (Կոյսաբերդ) և Ծաղկոցաձորի գլխին:

Ծաղկոցաձորի և Ախուրեանի քարայրները, որոնք հազարներով են համարուած, Բագրատունիների շրջանից 20—դար առաջ են հիմնուած, իրենց գոյութեամբ կապուած են նոյնպէս աչքատարեան շրջանի կառուցուածքների հետ: Բերդի պարիսպների մէջ ամրացած տանուտէրներին, (նախարար-իշխաններին), շրջապատող ժողովուրդը, զինուորական զօրութիւնն, ապաստանած է եղել Անի ամրոցի շրջապատի այրերը, հովանա-



Ափստարեան պարիսպներ  
Նկար Ք. Քոչումանյանի

ԹԻԻ 1

վորուել է իշխանից և պաշտպանել, հսկել է քաղաքին ու ամրոցին։ Ս. Լուսաւորչի տաճարի մօտ գտնուած ստորերկրեայ անցքը Մաղկոցաձորից Անիի յատակը տանող մուտքը առաջնորդում են ուսումնասիրողին ստորերկրեայ այն Անի քաղաքը, ուր պեղուած բաժան բաժան խորշերը, կարելի է ենթադրել, թէ անհատական

ընկալարաններ էին, ինչպէս ցոյց է տալիս նոյնիսկ ճարտարապետ պ. Թ. Թօրամանեանը:

4. Մալխաս բերդի արևմտեան բարձունքի վրայ նոյնպէս նկատելի է մի քանի շարքեր, որոնք բնիկները փարախ (աղ) են համարում, բայց անկասկած աչկատարեան ամրոցներ են, յար և նման Ագրակի և Տեկորի ամրոցներին:

5. Սրանցից հարաւ-արևմուտք Մընի գիւղի բարձունքի վրայ և ձորի մէջ շարէշար նկատելի են որմեր, որոնք իրենց կազմով և դիրքով անցորդին զգալ են տալիս, թէ իրենք ամրոցներ ու բերդեր են եղել և պաշտպանել են քառասուն դար առաջ իրենց կառուցանող ժողովրդին Ասորական և ապա Սկիւթական յարձակումներից:


6. Սրանց յար և նման խոշոր քարերով շինուած պարիսպներ կան Անիի մօտ, Ալաճա լեռան լանջին, Բագնայրի (այժմ Դոզլիջա) տաճարների մօտ, որոնք մեզ մտքով տանում են մեր ճարտարապետական շրջանի սկզբնական դարերը:

7. Անցեալ 1912 թ. օգոստոսին ճարտարապետ Պ. Թ. Թօրամանեանի և մի քանի բանասէրների հետ այցելեցինք Շիրակի Կապիլու (Լափըլու) գիւղը, որը Ալէքսանդրապոլից դէպի հարաւ տասնևհինգ կիլոմետր հեռավորութեան վրայ է գտնուում: Հեռուից երեցաւ գիւղի ամրոցը, որ շատ նման է Թիգնիսի դղեակին: Վերջինս գտնուում է արևմտեան Շիրակում, Արգինայի դիմացը, Թիգնիս գետի ափին, մի բարձր գագաթի վրայ: Այնքան իրար նման են այս ամրոցները, որ կարելի է ենթադրել, թէ Թիգնիսը Կապիլուի յատակագծով է շինուած:

Թիգնիսի դղեակը նոր է, ամբողջապէս կանգուն, երևում է որ Անիի շինութեան շրջանից շատ հին չեն կերտուած նրա որմերը, միայն արտաքին պարիսպները, պահականոցները և շինութեան երեք յարկի ներքին կամարներն են քանդուած, այնինչ արտաքին պատերը ամբողջապէս կանգնած են, իսկ Կապիլուի դղեակը աւերակ է, երկու պատն է մնացել:

Թիգնիսի դղեակի որմերը հիմունքից սրբատաշ քարերով են հիւսուած, այնինչ Կապիլուի սրբատաշ քարերով, կրաշաղաղով հիւսուած պատերը նախկին աչկատարեան որմերի վրայ է դրուած, որոնց մէջ ոչ կիր կայ, ոչ էլ կոփուած քար: Առանց կասկածի Կապիլուի դղեակը Թիգնիսից չորս հինգ դար առաջ է շարուած, և այդ երկու պատերը աչկատարեան շրջանի հիմունքի վրայ կանգնած դիմացել են տասնևչորս դար:

Կապիլուի ամրոցի հիմքի այս վիթխարի քարերը, առանց կրաշաղաղի հիւսուածքը ստիպեցին մեզ հետաքրքրութեամբ ու-



Կավիլուի միջնամերդը եւ ակատարեան պարիսպները:  
 Նկար ճարտարագետ Ք. Թորամանեանի

ԹԻՒ 2

սուճնասիրելու գիւղի միւս մասերն ու շրջապատը: Մնթաղբու-  
 թիւններս զուր չանցաւ, գիւղի արևելեան մասում երևցան հըս-  
 կայական աչկատարեան պարիսպներ, որոնք տեղ տեղ 30—40  
 մետր երկարութիւն ունին: Ճարտարագետ Թորամանեանը իսկոյն



Աշխատարեան պարիսպներ կառուցողի մէջ.  
Նկար հարստարարական թ. Թ. Գրամատեանի

ԹԻԻ 3

լուսանկարից այդ պատմական կերտուածքը, որոնց մէջ դործածուած էին խոշոր քարեր, իւրաքանչիւրը մի քառորդ խորանարդ մետր և աւելի ծաւալով:

Պէտք է նկատել, որ արևելեան Շիրակի սրբատաշ քարէ շինուածքները ընդհանրապէս փոխք քարից են կազմուած, այն

ինչ կապիտուի աչկատարեան ամբողջի և պարիսպներէ մէջ գործածուած է ամբողջապէս որձաքար: Նոյնիսկ Զ-րդ դարում շինուած միջնադարեան ամբողջը, որի հիմքերը աչկատարեան շրջանի կառուցուածք է որձաքարով, վրան աւելացրած սրբատաշ բարձր որմերը ամբողջապէս փուխը քարից են:

Աչկատարեան շրջանի պարսպից դած 100—120 մետր հեռաւորութեան վրայ մի եկեղեցու սրբատաշ քարերով, կրաշաղաղ որմերի հետքեր կան, ուր քանդակաւոր քարեր շատ կային, բայց պեղելու հնարաւորութիւն չունենալով անցանք դէպի գիւղի արեւելեան կողմը գտնուած քարքարոտ լեռները:

Կապիտուի աչկատարեան կառուցուածքների որմերը տարածուում են նախկին բաղաբի ամբողջ շրջապատը: Այս որմերը դէպի արեւելք տարածուելով հասնում են մինչև «Իշխանի բլուրը», որը ինչպէս թւում է, մի արհեստական հսկայ կուրգան է: Գիւղացիներն այդ կուրգանը «Իշխանի-բլուր» են անուանում աւանդաբար, որի բարձրութեան վրայ ինչոր սպարանքի կրաշաղաղ հիմքերը նկատելի են մինչև այսօր: Երևի աչկատարեան շրջանից յետոյ, մինչև թաթարական արշաւանքներն այստեղ բնակութիւն է եղել: Այս արհեստական բլուրի մէջը դատարկութիւն և այրեր լինելու մասին կասկածներ ունենալով թէ և տեղ տեղ ծակծակ են, բայց ոչինչ չեն գտել: Այս բլրի վրայ ման գալիս քայլերի ներքին արձականքի թնդիւնը լսում է:

Այս բարձրութիւնների լանջերին և կատարներին երևում են աչկատարեան շրջանի պարիսպներ, մարդկային մտքի և ձեռքերի արտադրութիւններ, բայց այնպէս էին քանդուած, կործանուած և ժայռի կտորների մէջ տարածուած, որ մի հետաքրքիր մաս չը կարողացանք նկատել, երևում է որ, Կապիտուի պատմական շրջանում հին դարերի ընթացքում բարձրութիւնների վրայ շինուած որմերի քարերը քանդուել, տարուել են և ուրիշ կառուցուածքների մէջ են գործածուել, կամ նոյնիսկ «Իշխանի բլուր» են կազմել:

Միայն տափարակի և լեռնալանջի պարիսպներէ հետքերը մեզ այս եզրակացութեան չը հասցրին: Այդ տեղերում հանդիպեցինք բազմաթիւ հեթանոսական գերեզմանների, ժողովրդի պաշտամունքի առարկայ դարձած քառակուսի փոքրիկ անծածկ շինուածքների, որոնք ցոյց են տալիս, թէ հնումը Կապիտուի շուրջը մեծ բնակութիւն է եղել: Լեռան ստորոտում գիւղացիները շինում են կաթնատան համար ստորերկրեայ մառաններ, մարագներ և կալեր, որոնց մէջ դուրս են գալիս ինչպէս կարասներով թաղուած դիակներ, նոյնպէս և դազաղ—շիբիմներ (սարկոֆագ)

Դագաղ—շիրիմները շինուած են կարմիր, փուխր քարից, յաճախ քանդակներով, որից կարելի է ենթադրել, թէ դրանք իրենց ամփոփած աճիւնների պատճառով պաշտամունքի առարկայ են եղել: Այս դագաղ-շիրիմները պատրաստուած են սովորական մարդու մեծութեամբ և ծաւալով, ուր զետեղելիս են եղել կաւէ ամաններ, որոնցից խիստ շատ են գտնուում նոյնպէս կարասներում և սոսկական գերեզմաններում: Դագաղ շիրիմների կափարիչներն էլ միևնոյն քարից են պատրուաստուած և գրեթէ 10—12 սանտիմետր հաստութիւն ունին: Մեր ուղեկից հանուցեալ Վռամ Բաբայանը գնեց մի քարէ դագաղ-շիրիմ Հայոց Ազգազրահան ընկերութեան Ալէքսանդրապոլի մասնաճիւղի թանգարանի համար, որն այսօր գտնուում է նոյն քաղաքի քաղաքային շինութեան բակում:

Բացի այս նկատելի է, որ Կապիլուն ունեցել է առու, որով լեռան լանջերից և հեռու տեղերից ջուրն եկել, լցուել է արհեստական աւազանը, ամրոցի շրջապատի հողերը ոռոգելու համար: Ունեցել է կաւէ փողրանքով ջրանցք, որով խմելու ջուր են մատակարարել ժողովրդին:

8. Այս 1913 թ. ճարտարապետ Թօրամանեանը նկատել էր Հոռոմ գիւղին կապած բարձունքի վրայ գտնուած աշկատաբեան շրջանի կառուցուածքներ, որոնց մասին խօսում էր մեծ ողևորութեամբ: Նոյեմբերի 6-ին ճանապարհ ընկանք Թօրամանեանի հետ դէպի Հոռոմ գիւղը, որը Ալէքսանդրապոլից միայն 14 վերստ հեռաւորութիւն ունի: Ճանապարհին հանդիպելով Կարաքիլիսա, Ճիլխան, Իմիրխան, Թալիբ-Օղլի գիւղերը, վերջապէս հասանք Հոռոմ: Այս գիւղերը կրում են թաթարական անուններ, XVI—XVIII-րդ դարում, որոնք դրուած են նախօրդ գիւղատէր խաների անունով: Այդ հողերը իւրացրել էին թաթար խաները Երևանի սարգարների իշխանութեան շրջանից, որոնք այդ տեղերից հեռացան, երբ հարիւր տարի առաջ Գիւմրին իր գաւառով անցաւ ռուսական իշխանութեան ձեռքը:

Գաղթական հայերը, Թուրքիայի այլևայլ գաւառներից պարբերաբար եկան, գրաւեցին այդ հողերը, հիմնեցին գիւղեր, պահպանելով նախկին տիրողների անունները: Այդ գիւղերն ընդհանրապէս տափարակներում գտնուելով, այդ տեղերում պտուսական աչքի ընկնող շինուածք չի կարելի նկատել: Բայց երևում է, որ այդ գիւղերի ամբողջ հանդերին մի ժամանակ տրեք է Հոռոմի բերքը, որը գտնուում է այդ տափարակների մէջ, իր բարձր և հսկայական դիրքով:

Թէ որտեղից է ստացել Հոռոմ գիւղը իր անունը, որոշ տե-


ղեկութիւններ անհնար եղաւ դանել ինչպէս մեր գրականութեան մէջ, նոյնպէս ժողովրդից աւանդաբար: Գուցէ այս անունը շատ հին է, Ուրարտական Ուրշաւնիի շրջանից, բայց դրական ոչ մի փաստ չըկայ ենթադրութիւններ անելու Այս գիւղից 25 կիլոմետր հեռավորութեան վրայ գտնուում է Հոռոմոսի վանքը, որը Թ-րդ դարի հիմնարկութիւն է, գուցէ սա էլ վանքին կալուածք են տուել մեր Զերմեռանդ Բագրատունիները, բայց ոչ մի փաստ չի երևում:

Հոռոմը մեծ դիրք է ունեցել աշխատարեան շրջանում իւր կըրկնակի, տեղ տեղ եռակի պարիսպներով, մեծ քաղաքով, և միջնաբերդով, որը մինչև օրս կոչուում է Կալալչի կամ աւելի ճիշտը Կալալիչի (Միջնաբերդ): Աւերակ Հոռոմի բերդն ու քաղաքը մեծ է ծաւալով, ոչ պակաս Անի հեթանոսական ամրոցից: Աւերակ Հոռոմի շրջապատի արտաքին և ներքին պարիսպները, ուղիները այնպիսի ժայռերով, ապառաժներով, սեպ սեպ բլուրներով և ցից ցից գլուխներով են զարդարուած, որ այդ ընդարձակ աւերակը, իւր որձաքարի պարիսպներով և քարակոյտերով ժամանակին մի անառիկ բերդ է եղել թշնամիների համար:

Գիւղացիները պատմում են, թէ 1853 թ., Ռուս-թրքական պատերազմի ժամանակ, երբ բաշիբոզուկները, քրդերը յարձակուեցան արևելեան Շիրակի գիւղերի վրայ, դաշտի գիւղականները ապաստանեցին Կալալչի բերդը, աշխատարեան պարիսպների մէջ և այդ տեղից դիմադրեցին աւարառուներին: Հոռոմի միջնաբերդն ու պարիսպները ծառայել են ժողովրդին նոյնիսկ ԺԹ-րդ դարում:

Անցեալ ԺԶ—ԺԹ-րդ դարի վերջը թուրքերը օգտուելով այդ աւերակ բերդից, նրա կառուցուածքը վերագրել են Զինիվիզներին և Բիւզանդացիներին, որոնց ընդհանրապէս Ռոմ են անուանում: Յայտնի է, որ ոչ միայն թաթար-թուրքերը, այլ նոյն իսկ Պարսիկ, Աղուան, Քուրդ և ուրիշ արևելեան ցեղերը ինչպէս Օսմանեան պետութիւնը, նոյնպէս նրա նախորդ բիւզանդական կայսրութիւնը, միջնադարեան Վինետիկի, Ճենովայի և ուրիշ իշխանութիւնները «Ռոմ» անունով են կանչում, նրանց շրջանից և աւելի հին դարերից մնացորդ բերդերը (բուրն էլ սովորական ձևով) «Ռումկալա» են անուանում: Գաղթական հայերն էլ հետեւելով արևելցիներին գիւղը, համաձայն հայկական տարադարձութեան և արտասանութեան «Հոռոմ» են անուանել:

Ներկայ Հոռոմ գիւղը գաղթականները հիմնել են նախկին աւերակ բերդի արևմտեան ստորոտում, որը ոռոգւում է Պալըխի (ձկնոտ) առուակով: Ներկայիս գիւղն ունի 360 տուն բնակու-



Կալսիչի մեհենի անբրավները Հոռոմի միջնաբերդում.  
Նկար հարտաբաղկեմ Ք. Քոբայանեանի

ԹԻԻ 4

Թիւն, սրբատաշ քարիիր եկեղեցի, ծխական և կառավարչական տարրական դպրոց: Գիւղի արևմտեան մասը հասել, միացել է աւերակ քաղաքը զրկած բլուրների ստորոտին, որտեղից անմիջապէս բարձրանում են զառիվերը:

Բազմաթիւ է այդ որձաքարով հարուստ բլուրների բո-

լորակը, որի շրջապատում արևմուտքից գտնուում է Սօնգիւրլի, արևելքից Թօմար-Պաշ և Մէջիդլի գիւղերը: Բլրակների արեւելքնան, հիւսիսային և արևմտեան կողմը տափարակ է, արևելքից Մանթաշ և արևմուտքից Պալըսլի առուակներով է ոռոգուած: Հարաւային կողմը միւս տափարակներից քիչ բարձր է, ունի ցածրիկ թումբեր, որոնք աստիճանաբար բարձրանալով տարածուում և հասնում են Արթիք և Հառիճ գիւղերի լեռնալանջերին, որոնք տարածուում են մինչև Արագածի հիւսիս արևմտեան կողերին:

Աւերակ Հոռոմը շրջապատող բլուրների բոլորակ շարքի տարածութիւնը, բլուրների ներքին և արտաքին լանջերով մօտ երկու կիլոմետր տրամագիծ ունի, իսկ բլուրների միջին բաղաճատիղը մի կիլոմետր և տեղ տեղ աւելի երկարութիւն ունի: Այս բլուրները մեծ ու փոքր քսանից աւելի գլուխներ ունին, որոնց բնիկները «Կոլոլ» են անուանում, այսինքն կոլատ—ցած ժայռի—բլուր:

Այս կոնդերի գլխաւոր շարքը ձգուած է հիւսիսից հարաւ, մօտ երկու կիլոմետր երկարութեամբ, աւերակ բերդի արևմտեան կողմը, որոնք աչկատարեան քաղաքի գլխաւոր պարիսպն ու մարտկոցներն են կազմում: Կոնդերի հիւսիսային ծայրի վերջին բլուրը գիւղի տափարակից հազիւ 30 մետր բարձրութիւն ունենայ: Հետեւալ կոնդը 20 մետրով աւելի բարձր է, իսկ երրորդ կոնդը, որ Կալաիչի բերդն է կազմում 70 մետրի չափ բարձր է գիւղից: Չորրորդ, հինգերորդ կոնդերը, որոնք աւելի մեծ ծաւալ ունին Միջնաբերդից 10—20 մետր աւելի բարձր են նորանից, իսկ Յնացեալ կոնդերը աստիճանաբար իջնում են մինչև Սօնգիւրլի գիւղը: Չորրորդ և հինգերորդ կոնդերի վերին գլուխը նոյնպէս շրջապատուած է աչկատարեան պարիսպով և երևում է, որ ծառայել են ամենահին շրջանում երկրի իշխողների ապարանքներին:

Գլխաւոր արևմտեան շարքի կոնդերի արևմտեան կողերին կան ցած կոնդեր, որոնք տափարակի հետ կապուած են դարիվեր ճանապարհներով: Այս ճանապարհների արտաքին կողերը պարսպուած են տեղ տեղ կիկլոպեան պատերով, որոնք պարսպի տեղ են ծառայել: Այս բլուրների ցած դարիվար լանջերի վրայ նկատելի են հեթանոսական գերեզմաններ, որոնք աստիճանաբար ցած գալով միանում են այժմեան գիւղական հանգստարաններին, որը գտնուում է այդ բարձրութիւնների ստորոտում:

Գլխաւոր շարքի բարձր կոնդերի հարաւային ծայրի կոնդերը աստիճանաբար թեքւում են դէպի արևելք աղեղնաձև և ապա


բոլորուելով զէպի հիւսիս՝ գալիս միանում են դարձեալ գլխաւոր շարքի հիւսիսային ծայրի կոնդին, կազմելով մի կիսաբոլորակ պար, շրջանակ: Արեւելեան այս աղեղնաձև կոնդերի շարքը կիսով չափ ցած են բերդի արևմտեան բարձր կոնդերից, որոնց մէջ տարածուած ընդարձակ տափարակը թեքուած է զէպի արևելահիւսիս, որը հին քաղաքի տեղն է:

Քաղաքատեղը լիովին տափարակ չէ, նրա մէջ կան թումբեր, ձորակներ, խրամներ, բայց այնքան զգալի խոր ու բարձր չեն, որ ընդհատեն, խանգարեն հարթութիւնը: Արևելեան ցած կոնդերի լանջերը թեքուելով և իջնելով զէպի արևելք, միանում են Թօմարդաշի ընդարձակ հովիտին, որի հարաւ-արևելեան ծայրը տարածուած և հասնում է Ղուլիջան գիւղը, որը նշանաւոր է ապառաժի վրայ կրած բեռնաձև արձանազրութեամբ: Գիտնականները այս բեռնազիրը վերագրում են Արգիշտին, որը Ք. ծ. 784 թ. առաջ թագաւորում էր Ուրարտական աշխարհում:

Հոռոմի բերդաքաղաքի հիւսիսային ծայրի երկու կոնդերի կատարն ու շրջապատը ծածկուած են որձաքարով, որոնց վրայ մարդկային աշխատութեան հետք չի երևում: Սրանց կպած գըլխաւոր շարքի երեք կոնդերը շրջապատուած են աչկատարեան կրկնակի պարիսպներով, որոնք այսօր տեղ տեղ երկու մետր բարձրութիւն և մի մետրից աւելի թանձրութիւն ունին, հիւսուած են միաշար խոշոր որձաքարով, որոնց մէջ 1—2 մետր երկարութիւն, 1 մետր բարձրութիւն և այդքան էլ թանձրութիւն ունեցող քարեր շատ կան:

Այս պարիսպների մէջ այսօր տեղ տեղ 2—5 շարք քարեր կարելի է նկատել, բայց երևում է, որ հնումը նրանք 5—6 շարքից են կազմուած եղել, ապա գլորուելով, թափուելով ցածրացել են: Քարերն իրար կողքի շարուած են մեծ ճարտարութեամբ, իրար վրայ դարսուած են խածերով, այնպէս որ այդ ծանր քարերը իրարից կարելի է բաժանել մեծամեծ աշխատութիւնով: Թէև քարերը սրբատաշ չեն, նրանց վրայ երկաթի մուրճի և սանրի հետքեր չկան, բայց որմերի արտաքին երեսներին շարուած են քարերի հարթ կողմերը: Պարիսպները իրենց երկարութեամբ ուղիղ շարքեր են կազմում, բայց ոչ լարձաձիգ ճշդութեամբ:

Այս երեք կոնդերի ծայրերը, ինչպէս թւում է, սկզբում կոնաձև գլուխներ են ունեցել, բայց մարդկային միտքն ու ձեռքը նրանց բարձր մասը կտրտել և գազաթխերը հարթելով յարմարացրել են դղեակի կամ մեհեանի շինութիւնների համար: Կախիչին և նրան կցուած երկու կոնդերը, նկատելի է, որ յատ-



Հոռոսի աշկատարեան ներքին պարիսպները.  
Նկար ճարտարապետ Ք. Քոլումանեանի

ԹԻԻ 5

կապէս մարդկային ձեռքով հարթուած են, յարմարութիւններ ստեղծելու համար: Երեք կոնդերի էլ վերին գագաթը շրջապատուած է աշկատարեան վիթխարի պարիսպներով, որոնց մէջ գործածուած քարերը երբէք չէր կարելի առանց մեքենաների բարձրացնել կոնդերի լանջերից: Պէտք է ենթադրել, որ կոնդերի

գլուխները հարթելու համար կտրուած քարերով հիւսել են կըրկ-նակի պարիսպները և ծածկել լանջերի երեսը: Թէ ինչ վիթխարի գործ է 50 մետր լայնութեամբ և 100—200 մետր երկարութիւն ունեցող այդ որձաքարերի ապառաժների կտրելը, մաքրելը, հարթելը, կարող են մակարեբել ներկայ դարի այն ճարտարապետները, որոնք լեռներ են կտրտում, ծակում երկաթուղիներ անցկացնելու համար: Միայն թէ պէտք է նկատի ունենալ, որ մեզանից 30 և աւելի դար առաջ մեքենայ, վառօդ, ուժանակ չէին գործածուում, այլ մարդկային բազուկները, թիկունքն ու սրունքներն էին գործում: Թէ ինչ անուխ ոյժ է գործ դրուած, որքան հազար մարդիկ են տանջուած այդ հսկայական գաղափարը իրականացնելու համար, թող հաշուեն մասնագէտները:

Երեք գլխաւոր կոնդերի արտաքին պարիսպները կրկնակի պատերի շարքով իրար միացած են, որոնց հիւսուածքը ոչնչով չեն տարբերուում կոնդերի գազաթների շրջապատի վերին և ստորին պարիսպներից: Այս պարիսպները միևնոյն շարքերով առաջ են գնացել մինչև հարաւային կոնդի շրջապատը և ապա անցել արեւելեան կոնդերի շրջապատը, հասել են մինչև Կալաիչի միջնաբերդի աւերակները: Այսպիսով կազմել են մի ընդարձակ պարիսպ ամբողջ աւերակ բերդաքաղաքի շուրջը, որը լիովին պատրաստուած է եղել արտաքին թշնամիներից, ինչպէս բնական կոնդերի շարքով, նոյնպէս և կրկնակի հսկայական պարիսպներով:

Քանի որ չի չափազրուած անկատարեան այս հսկայական բերդի պարիսպներն ու մտրտկոցները, չի կարելի որոշել վիթխարի կերտուածքի ծաւալը, բայց եթէ գոնէ մի կիլոմետր ընդունենք բերդաքաղաքի տրամագիծի միջին երկարութիւնը, կարող ենք համարձակ ասել, որ նրա շրջապատի կրկնակի պարիսպները, ներքին և արտաքին ճանապարհների կողերին շինուած պատերը, միջնաբերդի և միւս կատարների շրջապատի պարիսպները աւելի քան եօթը կիլոմետր երկարութիւն կստացուի: Եօթը կիլոմետր երկարութիւն, ոչ նուազ մի մետր հաստութիւն և երկու, տեղ տեղ աւելի, սկզբնականը ոչ պակաս չորս մետր եթէ համարենք, թէ ինչ հսկայական գործ կստացուի, կարող է ամեն մարդ գաղափար կազմել:


Սակայն միայն բերդաքաղաքի արտաքին պարիսպների հսկայական գործը չէ արմանքի ու զարմանքի առարկայ, այլ քաղաքի ներքին մասն էլ մտածմունքի շատ նւթ է տալիս: Ինչպէս պարսպից գուրս պարսպաւոր ուղիներ է շինուած դաշտ իջնելու համար, այդպէս էլ փողոցներ են տարածուած քաղաքի



Հոռովի աշխատարանի արտաքին պարիսպը արևելքից.  
Նկար ճարտարագետ Ք. Բորտանյանի

ԹԻԻ 6

մէջ, հիւսիսից հարաւ և արևելքից արևմուտք: Այս փողոցները թէև՝ ոչ ուղղաւիժ, բայց տարածուած են ամբողջ քաղաքի երկարութեամբ և լայնութեամբ, որոնց երկու քովերի բնակարանների որմերն էլ աշխատարան կերտուածքներ են, մեծամեծ որձաքարերով:



ԹԻԻ 7

Հոտով աչկատարեան պարսպի արտաքին երեսը արևելքից.  
Նկար հայտարարվեալ Բ. Բորամանեանի

Յայտնի բան է, անողոք ժամանակը քանդել ու մաշել է շատ բան, քամիները հողով ու աւազով լցրել են այդ փողոցները և քանդուած ընակարանները, բայց աչկատարեան որմերի վիթխարի որմերի որձաքարերը դիմադրել են ընութեան դաժան երկոյթներին և դեռ հաստատուն կանգնած են. հետաքրքրուողնե-

րին փողոցների ուղղութիւնը և բնակարանների դիրքն ու ծաւալը ցոյց տալու համար Այս բնակարաններն էլ թուով, ծաւալով, որակով և քանակով չեն գանազանուում շրջապատի որմերից, որոնք դրաւում են այցելուի հայեացքը և ժամբով զբաղեցնում:

Փողոցների երկու կողմերի որձաքարով շինուած և իրարից բաժանուած բնակարանները մեծ մասամբ ուղղանկիւն քառակուսիներ են կազմում 6—7 մետր երկարութեամբ և լայնութեամբ: Նեղ-նեղ, դարիվեր փողոցները երբեմն ընդհատուած են այդ բնակարաններից, որոնք տարածուած են մինչև կոնդերի ստորոտները և նոյնիսկ լանջերի վրայ:

Բաղաքի մէջ մի տափարակ յատկապէս սալայատակուած է կարմիր փուխր քարով, որ շատ է գտնուում Շիրակում: Բերդաքաղաքի ամեն կողմը մանր, չեչոտ որձաքարով է ծածկուած, բարձրութիւնները բոլորը որձաքար են բովանդակում, աչկատարեան ամբողջ կառուցուածքը որձաքարից է, իսկ այս կարմիր փուխր-քարի սալայատակը խիստ աչքի է ընկնում ամբողջ տարածութեան մէջ: Սալայատակի կարմիր քարերը տաշուած, կոփուած չեն, ոչ էլ շրջապատը ուղղուած, բայց անկասկած է, որ մարդկային ձեռքով են յատակուած և այդ քարերը 5—6 կիլոմետր հեռու տեղից են բերուած:

Այս կարմիր, փուխր քարերը խոշոր են, 2 մետր երկարութիւն, 1 մետր լայնութիւն և  $\frac{1}{2}$  մետրից աւելի հաստութիւն ունին: Արաւաքին տեսքը ցոյց է տալիս, թէ դրանք բնական իրենց տեղում տարածուած քարեր են, բայց գիւղացիներն երկու քար դարձրել էին, երկու երեք քար էլ իրենց հանգստարանն էին տարել, որոնցից նկատելի է թէ դրանք ուրիշ տեղից են բերուած:

Այս սալայատակի տափարակի շուրջը չորս հատ վիթխարի խոյակ-խարխիս են գլորուած, որոնց ամեն մէկը երկու մետր ճակատ և հաստութիւն ունի, մի մետր խանձրութեամբ: Պոյակները սրբատաշ չեն, բայց կոփուած են յատկապէս քառանկիւնացրած. այնքան թանձր ու կոպիտ են, որ մինչև անզամ կասկածելի է թուում, բայց սիւների վրայ յարմարեցնելու բոլորակ տեղերը կարծիքները ցրում են:

Այս սալայատակի շարքին գտնուում են հինգ տեղ մեծամեծ ժայռեր, տափարակ երկու մետր երկարութեամբ և մի մետր լայնութեամբ երեսով, որոնց վրայ մի մետր երկարութեամբ և կէս մետր լայնութեամբ պայտաձև տառի նման փորուածքներ կան, որոնք 12 սանիտիմետր լայնութիւն ու խորութիւն ունին: (Տես նկար, № 8): Մի երկուսը աւելի նեղ ու երկար են, միւսները լայն, ձուածն: Թէ ինչի են ծառայել այդ փորուածքները՝ անբացատրելի մնաց:



Պայտածե քանդակատր քար Հոռոմ՝ քաղաքի մէջ.  
Նկար հարաւորակետ Բ. Քոբանեանի

ԹԻԻ. 8

Կոնդերի արտաքին կողքերին նկատելի են հեթանոսական դամբաններ, որոնցից տասի չափ պեղել է հանգուցեալ Բագ. Սալաթեանը, որը հիւանդութեան պատճառով չը կարողացաւ իր զեկուցումը աւել հանգուցեալ Բ. Սալաթեանը պեղած դամ-

բաններից գտել էր կաւէ ամաններ, ուլունքներ, մանեակներ, բրոնզէ սպարանջաններ, դաշոյններ և ուրիշ զէնքեր, բոլորն էլ բրոնզէ շրջանից, որոնք ինձ ցոյց տուեց 1911 թ. օգոստոսին:

Բերդաքաղաքում մանգալիս գիւղացիներն ուշադրութիւնս կեդրոնացրին յատակից լսուած խոր արձագանքին, սաստիկ դժբաղքովն, կարծես թէ կամարակապ առաստաղների կտուրին էինք ման գալիս: Այնքան զգալի էին այդ թնդիւնները, որ մտածեցի մի տեղ փորել և որևէ դրական եզրակացութեան հասնել: Բայց փորձառու ընդհանրը նկատեցին, թէ խիստ խորն են այրերը, որոնք արձագանք էին տալիս: Կոնդերի հիւսիսի լանջերից գիւղացիները բացել են մի քանի ստորերկրեայ այրեր, որոնց խորքերը առաջանալու երկիւղ են կրում: Գիւղացիներին սարսափեցնում է նախապաշարումը, սոսկում են հեթանոսական չար ոգիներից, դևերից, ճիւղաղններից, արևապաշտների ոսկերոտներից, չեն յանդգնում նեղ ու մութ անցքերից անցնել: Կասկածում են նոյնպէս այրերում ապրող գազաններից, օձերից և չեն համարձակուած առաջ գնալ:

Բացուած այրերի բերանները և արտաքուստ երևցող քարանձաւները հետաքրքրական չեն, միայն նկատելի է որ ամբողջ այրերը բերդաքաղաքի և շրջապատի կոնդերի մէջ տարածուած են և սրանց ուսումնասիրութիւնը խիստ կարևոր է: Քանի որ Անին նախնական շրջանում ունեցել է հազարաւոր այրեր, որոնք յարմարեցրած են եղել բնակարանների, Հոռոմի աչկատարեան բերդաքաղաքն էլ անշուշտ իր բազմաթիւ բնակիչների այդ հսկայական պարիսպները կանգնեցնողների համար չէր կարող իր այդ բնակարանները չունենալ, որովհետև աչկատարեան շրջանում ււաններն իրարից ընդօրինակում էին կերտուածքներն ու կուտուրան:

Մեզածէ արձանագրութիւնների ընթերցման մէջ մի իշխան պարծենում է թէ բերդի պարիսպում տասն հազար որձաքար է գործածել: Եթէ Հոռոմի 7 կիլոմետրից աւելի երկարող պատերի քարերը հաշւենք, իւրաքանչիւր մետրին մի քար. կէս մետր հաստութեամբ և բարձրութեամբ, պատերի շարքերը վեց քարից համարենք, ո՛չ թէ տաս հազար, այլ չորս անգամ աւելի, քառասուն հազար քար կարող էինք համարել: Եթէ ամեն մի քարի կտրելուն, բերելուն, տեղը դնելուն տասն օրական բանւորի ոյժ հաշւենք, մօտաւորապէս չորս հարիւր հազար բանւորի ոյժ կտտանանք միայն պարիսպների աշխատանքների վրայ: Գէտք է մի այդքան էլ համարել միջնաբերդի, գլխաւոր բերդերի մէջ շինուած ստանարների, դղեակների յարմարեցնելու և այրերի փորելու հա-

մար, որպէսզի գաղափար կազմենք, թէ ինչ գերագոյն ոյժ են գործ դրել այդ բերդը կառուցանելու համար:

Հոռոմի բերդի կենդանի պարիսպները, քաղաքի փողոցներն ու բնակարանների դիրքը մեզ ցոյց են տալիս, թէ ինչ բազմամարդ է եղել Ուրարդացիների և նրանց նախորդ Խալդեերի Շիրակը, որ իրարից 5—10 վերստ հեռաւորութեան վրայ գտնուում են Հոռոմի նման մի քանի տասնեակ պարսպաւոր աւաններ, ինչպէս Կապիլուն, Ղուլիջանը, Ադիամանը, Մալխաս բերդը, Անին



ԹԻԻ 9

Միջնաբերդի վերին պարիսպը  
Նկար ճարտ. Բ. Քօրամանեանի

Արգինան, Սօսկերտը, Մարմաշէնը և ուրիշները, որոնք ինչպէս երևում է, ոչ միայն միաժամանակ ծաղկած են եղել, կրկնակի և աւելի պարիսպներով պատած, այլ և ունեցել են իրենց իրարից անկախ տանուտէր — իշխանները: Եթէ միւս քաղաքների աչկատարեան շրջանի վերոյիշեալ պարիսպներն այսօր ամբողջապէս չեն կանգնած այլևայլ հանգամանքների պատճառով, նրանց կցկտուր պարիսպները վկայում են նրանց գոյութեան, ծաւալի և մեծութեան մասին: Իսկ Հոռոմի դեռ կանգուն և հպարտ պարիսպներն ասում են, որ Ուրարդական

ըրջանի (Թ. Ը. դար Ք. ծ. առաջ) այն արիւնհանգ մրցման դարում, ուր Ասորեստանի Թագաւորներն անաւոր բանակներով յարձակուում և հարիւրաւոր բերդեր և բերդաքաղաքներ էին աւերում Նայիրի և Ուրարդուի երկրներում, մեր տանոււէր—իշխաններն իրենց ժողովրդով պարտաւորուած էին աչկատարեան բերդեր ունենալ, նրանց ամրացնել մեծ նախանձախնդրութեամբ:

Հոռոմի պարիսպներէ շարքերում, ինչպէս ասացի, չի կարելի նկատել մի քար, որը մուրճով, ծէրիով կամ սանրով ոչ թէ սրբատաշուած, այլ գոնէ կոփուած լինի: Աչկատարեան այս անաւոր կռուցուածքի մէջ բոլորովին տարբեր կազմ ունի Կալիէի միջնաբերդի վերին պարիսպը և նրա գագաթի աւերակ մեհեանի հիւմքը: Այս երկու շինութեան քարերը ոչ միայն երկաթի գործիքով կոփուած են, այլ նոյն իսկ շարքերը բոլորովին տարբեր կազմ ունին բերդի և բերդաքաղաքի շրջապատի պարիսպներին: Այստեղ ոչ միայն հմուտ արհեստագործ—վարպետի միտքն է աշխատել, այլ գործել են արուեստագէտ-ճարտարապետները հմուտութեամբ:

Վերևի Թ. 9 պատկերում նկատելի է, որ միջնաբերդի անկիւնաւոր պարսպի մնացորդը, որի հինգ շարքը այսօր կանգնած է, որի շուրջը Թափուած քարն ու հողը ծածկել են ստորին շարքերը, աւելի հին է, քան թէ մեհեանի կրաշաղաղով հիւսուած որմերը: Քարերն այնպէս են իրար քով շարուած և այնպիսի կապերով են իրար միացած, որ կարող են այսօր ամեն մի հմուտ վարպետի նախանձը շարժել: Ճշմարիտ է որձաքարերի երեսն ու շրջապատը եռանկիւնով չեն սրբատաշուած, բայց նկատելի է որ ամենքն էլ ծէրով, մուրճով հարթուած—կոկուած են, պատը լարով է շարուած, շարքերն իրար վրայ կշռով են դարսուած: Պարզ է որ աչկատարեան պատուարները շինող բիրդ ձեռքերը չէին կարող քարերը այսքան քառակուսիացնել, կոկել և այսքան միաք գործ դնել: Թէև սրանք էլ առանց կրաւազի շաղախով են հիւսուած, բայց մանր քարերով այնպէս են իրար կապուած, որ Ուրարդական շրջանից մինչև այսօր հաստատ կանգնած են և դեռ սպառնում են այդքան էլ տոկալ:

Անշուշտ վարպետը կրաւազի գործածութիւնից առաջ է կերտել այս պարիսպը, ապա թէ ոչ այնքան խնամքով որմ հիւսողը չը պիտի խնայէր իր յիշատակարանը յաւիտեանկանացնելու համար շաղաղով ամրացնել իր ձեռակերտը: Այս պարսպի որձաքարերն էլ մամոռուած են, դարերն իրենց կնիքը դրել են նւրանց վրայ, բայց ապառաժի բեկորները կարծես խպնում են շրջապատուած այն աչկատարեան պատուարներին, որոնք թէև

հսկայ, բայց իրենց բիրտ նախորդներն են: Անշուշտ աչկատարեան պատուարները և սրանց կերտուածքի ժամանակամիջոցը մի քանի դարերով իրարից հեռու են:

Մեհեանի պատերը (տես նկար թիւ 4) բոլորովին տարբեր կազմ ունին նոյն իսկ վերը խօսուած Կալաիչի միջնաբերդի պարսպից: Թէև այստեղ գործածուած քարերն էլ միայն կոփուած ու կոկուած են, սրբատաշ չեն, բայց կրաազի շաղաղով են հիւսուած: Անշուշտ այս մեհեանը շատ ուշ է շինուած միջնաբերդի պարսպից, պատկանում է այն շրջանին, երբ գործածական էր մեր աշխարհում կրաազի շաղաղը: Այս շէնքի էլ պատերի շարքերը որձաքարերից են, այնքան էլ չեն գանազանուում իր տաշուածքով միջնաբերդի պարսպի մէջ գործածուած քարերից, բայց ամբողջ կազմից երևում է, որ սրանք շինող վարպետները նախորդներից անհամեմատ աւելի ճարտարութեամբ են օժտուած եղել:

Միայն կրաազի շաղաղը չէ մեհեանի կազմի առաւելութիւնը, այլ որմերը շարուած են կրկնակի՝ արտաքին և ներքին շարքերով, որը հիմնաւորապէս տարբերուում է ինչպէս աչկատարեան շրջանի, նոյնպէս միջնաբերդի պարսպի որմերից: Այս քառակուսի շէնքի լարածիգ պատերից դուրս են եկած ինչպէս մէջտեղերից, նոյնպէս անկիւններից կարկինի ճշտութեամբ կիսաբոլոր աշտարակներ: Թէև այսօր հիմքից հազիւ մի մետր բարձրութեամբ որմեր են երևում, բայց դրանք ցոյց են տալիս, որ ժամանակին իրենց վրայ կանգնած են եղել կիսադաշնաձև աշտարակներ, կամ մեհեանական մուտքեր, որոնք ծառայել են հեթանոս շրջանի իշխան-քրմերին որպէս մեհեան.—ապարանք:

Այս շէնքի հիմքն ու ծաւալը ցոյց տալու համար կարևոր յատակագիծը դուրս բերելու հնարաւորութիւն չեղաւ, քանի որ պեղելու կարիք կար, բայց լուսանկարն արդէն պարզ ցոյց է տալիս, թէ նա ինչ հսկայական գործ է եղել: Շէնքի կազմն ու ձևը ցոյց է տալիս, որ նա եթէ Ուրարդական շրջանին չի պատկանում, այդ դարերից էլ շատ ուշ չէ կերտուած:

Հետևաբար Հոռոմի բերդաքաղաքը իր գոյութեամբ հրապարակ է գալիս ապացուցանելու մեր երկրի ամենահին կուլուրայի երեք գլխաւոր շրջանները: Տարակոյս չը կայ, որ աչկատարեան հսկայ պատուարները իրենց գոյութիւնն ունեցել են Ուրարդական շրջանից շատ վաղ, երբ երկրի ընդհանրը պարտաւորուած էին իրենց հայրենիքը պաշտպանել ինչպէս երկրի ներքին իշխանների իրար դէմ ունեցած ոտնձգութիւններից, նոյնպէս արտաքին թշնամիների յարձակումներից: Աչկատարեան պա-

տոււարները կառուցուել են այն դարերում, երբ դեռ երկաթի գործածութիւնը գոյութիւն չունէր: Անշուշտ այս շրջանի ժամանակամիջոցը առայժմ որոշելը վաղաժամ է, կարևոր է դեռ դրական ապացոյցների, միայն աներկբայ կարելի է ասել թէ Ուրարդական շրջանից շատ վաղ է, քանի որ Ուրարդական շրջանում երկաթի գործածութեան մասին ոչ միայն վկայում են բնեռածն արձանագրութիւնների բովանդակութիւնները, այլ նոյն իսկ դրանց գոյութիւնը, որոնք կատարուել են սրճատաշուած որձաքարերի վրայ ամենայն ճարտարութեամբ:

Կալայիչի միջնաբերդի պարսպի որմերը ցոյց են տալիս որ բերդաքաղաքը գոյութիւն ունեցել և ծառայել է Ուրարդական այն շրջանում, երբ երկաթի գործիքներով կարողանում էին կոփել որձաքարերը և աւելի կանոնաւոր պարիսպներ շինել:

Մենեանի կրաւազի շաղաղով հիւսուած պատերը և նրանց վրայ գործ դրուած հմտութիւնը ցոյց են տալիս, որ Հոռոմի բերդաքաղաքը իր գոյութիւնը շարունակել է նոյնպէս Ուրարդական իշխանութիւններից յետոյ, զուցէ Արմէնների նախնական շրջանում:


9. Աչկատարեան բերդերի պարիսպների կտորներ նկատուում են Ռահ գետի ափերում, Շահնալարի ձորում, Բագրատունեան շրջանի կաթողիկոսանիստ Արզինա աւանի մօտ, որը կարիք ունի ուսումնասիրութեան:

10. Արզինա աւանից դէպի հիւսիս, Թիզնիս և Մօքրիզ վտակների ափով բարձրանալով գտնում ենք յայտնի Սոսկերտ բերդի աւերակները, որը, ինչպէս երևում է, վերաշինուած է նոյնպէս Արշակունեան և Բագրատունեան շրջաններում: Այս գիւղը երկար ժամանակ Բաշ-Շէօրագեալի (Երազաւորս աւանի) Մալխասների ռամառնոցն է եղել, բայց 1850 թուականից ի վեր Մադադ-բէզն այդտեղը տուեց գաղթական Շիա—թուրքերի, որոնք ապրում են մինչև մեր օրերը: Սոսկերտի և շրջակայ գիւղերի պարիսպներն ու ամրոցները իրենց կազմով յիշեցնում են Տիկորի, Ագրակի, Կապիլուի և Հոռոմի աչկատարեան շինուածքները և ապա յաւելուածներ, որոնք նոյնպէս հետաքրքրական նիւթեր են տալու մեր կուլտուրական պատմութեան:

11. Մարմաշէնի (Կանլիշա) սեպածն արձանագրութիւնից դէպի գիւղ և ճանապարհին նոյնպէս նկատելի են աչկատարեան պարիսպներ, քանդուած և հատ ու կտոր, որոնք ցոյց են տալիս թէ Պահլաւունիները ուրարդական մեծ քաղաքի մօտ են հիմնել իրենց ոստանը, և տաճարներով, կամուրջով, այգեստաններով ու ապարանքներով զարդարել:

12. Արագածի բարձր լանջին բազմած Աղիաման գիւղում կայ մի աշկատարեան պարիսպ, որ ինչպէս պատմում է պ. Քորամանեանը, միննոյն կազմուածքն ունի, ինչ որ ունին Հոռոմն ու Կապիլունս Դեռ աւելի մեծ տիտանական ժայռերով են հիւսուած այդ ամրոցի պարիսպները, աւելի երկար քան թէ նախորդները:

Վերջացնելով մեր նկարագրութիւնը՝ պարտք ենք համարում յայտնել, որ նայ ճարտարապետութեան ուսումնասիրութեան սիրայօժար, անձնագոհ ճարտարապետապ. Քորոս Քորմանեանը չը զըլացաւ իր լուսանկարները յանձնել գործիս մէջ տպագրելու համար: Միանգամայն նրա հետ միասին ենք հղել Վրոյիշեալ Ծ գիւղիցում, ուր նա թէ լուսանրկարել և թէ բացատրել է աւերակների մասին իր տեսութիւնները:



Աղիամանի աշկատարեան պարիսպը  
Նկար Բ. Քորամանեանի